

ՏԱԹԵՎԻԿ ՎԱՉԳԵՆԻ ՇԱՐԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության

ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ՏԱԹԵՎԻԿ ԱՐԱՅԻ ՈԱՖԱԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անցումային տնտեսություն վարող յուրաքանչյուր երկրի համար, ինչպիսին նաև Հայաստանն է, կարևոր նշանակություն ունի հարկային համակարգը:

Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են հետևյալ ուղղություններով՝

- ա) հարկային օրենսդրությամբ, որը բաղկացած է «Հարկերի մասին» ՀՀ օրենքից և առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքներից.
- բ) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով՝ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և սահմաններում.
- գ) հարկային մարմնի, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում պետական կառավարման այլ մարմինների կողմից ընդունված ակտերով՝ հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված դեպքերում և սահմաններում¹:

Հարկային մարմինների տեղն ու դերը երկրի ֆինանսական համակարգում որոշվում է նրանց առջև դրված խնդիրներից ու նպատակներից, ինչպես նաև օրենքով սահմանված իրավունքներից ու պարտականություններից: Հարկ է նշել, որ տարբեր երկրներում հարկային մարմինների գործառույթների թվին են պատկանում ոչ միայն որոշակի հարկերի և տուրքերի հավաքագրումը, այլ նաև, օրինակ, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումը, ՀԴՄ-ների կիրառման հսկողությունը, արժույթային օրենսդրության պահպանման վերահսկողությունը, ակոհոլային ապրանքների շրջանառությունը, վիճակախաղերի կազմակերպումը:

«Հարկային մարմիններ» հայեցակարգն ինքնին տարբեր երկրներում տարբեր կերպ է ընկալվում: Դա պայմանավորված է նրանով, որ բյուջետային եկամուտներն (հարկերն ու տուրքերը) ապահովելու պարտավորությունը կարող է վերապահված լինել տարբեր պետական մարմինների: Որպես կանոն վճարման ենթակա հարկերի և տուրքերի համար պատասխանատվություն են կրում երկու կամ ավել պետական մարմիններ, որոնք էլ ունեն «հարկային մարմիններ» իրավասությունները: Կառուցվածքներից մեկը սովորաբար պատասխանատու է սահմանի վրա հարկերի և տուրքերի հավաքագրման համար (այսպես կոչված մաքսային մարմինները), մյուսը՝ ներքին հարկային վճարումների հավաքագրման համար:

Երկրի չափից կախված հարկային մարմիններ ունեն, որպես կանոն, երկու-երեք մակարդակ (փոքր երկրներում միայն երկուսն են՝ կենտրոնական և տեղական, իսկ ավելի մեծ երկրներում երեք մակարդակ՝ կենտրոնական, տարածաշրջանային և տեղական):

Հարկային մարմինների տարբեր մակարդակների կազմակերպական կառուցվածքի սկզբունքները ոչ միշտ են միանման: Այսպիսով, ուսումնասիրված երկրների 38%-ում կենտրոնական համակարգը կազմակերպված է խառը սկզբունքի հիման վրա՝ այսինքն հարկային մարմնի կառուցվածքում առկա են գործառույթային հիմունքներով, ինչպես նաև հարկերի կամ հարկատուների առանձին խմբերի հետ աշխատելու համար ստեղծված ենթակառուցվածքներ: Երկրների 30%-ի մոտ հարկային մարմինների կենտրոնական համակարգի կազմակերպական կառուց-

¹ Հարկերի մասին ՀՀ օրենք, հոդված 12: ՇՕ-107: ՀՀՊՏ 1997.05.20/11:

վածքը հիմնված է գործառության հիմունքների վրա, 27%-ի դեպքերում ըստ հարկատեսակների և միայն 5%-ի դեպքում՝ ըստ հարկատուների խմբերի:

Տարածաշրջանային և տեղական հարկային մարմիններն առավել հաճախ կառուցվում են գործառության հիմունքներն երով. համապատասխանաբար ուսումնասիրված երկրների 36%-ի և 41% -ի մոտ:

Հարկային ենթակառուցվածքների գործունեության ամենակարևոր խնդիրներից մեկը կապված է մաքսային մարմինների հետ նրանց համագործակցության հետ: Երկրների միայն 22%-ի մոտ է, որ մաքսային մարմինները ներառված են հարկային վարչարարության մեջ¹:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի՝ հարկային մարմինը օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող միասնական պետական կառավարման հանրապետական մարմին է, որի հիմնական նպատակներն են.

- «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խնդիրների լուծումը,
- հարկային մարմնի կողմից վերահսկվող հարկային եկամուտների ապահովումը,
- Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությանը նպաստումը²:
Հարկային մարմնի համակարգը ներառում է՝
- վերադաս հարկային մարմինը, որի կառուցվածքը հաստատում է ՀՀ կառավարությունը,
- հարկային մարմնի հարկային տեսչությունները (այսուհետ՝ նաև հարկային մարմիններ)՝ ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է ՀՀ կառավարությունը,
- հարկային մարմնի առանձնացված ստորաբաժանումները, որոնց ստեղծում է ՀՀ կառավարությունը³:

Հարկային բարեփոխումների ներկա փուլում ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը խիստ հրատապ և արդիական է: Միաժամանակ հարկային համակարգը ներկայումս բավական խոցելի է, սակայն, հաղթահարելով անցումային փուլի դժվարությունները, այն որպես ինքնուրույն համակարգ, ունի կայուն վարկանիշ, որը չափելու համար կարող ենք հիմք ընդունել մի շարք մտեցումներ ու չափանիշներ, ինչպիսիք են.

1. Օրինականությունը՝ հարկային մարմինը իր վարկանիշը բարձրացնելու համար պետք է լինի հետևողական և իր գործողությունների ժամանակ առաջնորդվի բացառապես գործող օրենսդրական նորմերով՝ խստագույնս պահպանելով հարկային ծառայողի էթիկայի կանոնները:
2. Օբյեկտիվությունը՝ հարկային մարմինը պետք է լինի անաչառ, արդար, վստահելի կառույց հարկ վճարողների տեսանկյունից՝ որդեգրելով օրենսդրության համահավասար կիրառման սկզբունքը բոլոր հարկ վճարողների համար:
3. Թափանցիկությունը՝ հարկային մարմինը պետք է լինի թափանցիկ իր գործողություններում, ապահովի հարկ վճարողներին ժամանակին իրազեկումը՝ ստեղծելով վստահության մթնոլորտ վերջիններիս շրջանում:
4. Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը:
5. Հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպումը:
6. Հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմների ներդրումը:
7. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, ներքին հսկողության մեխանիզմների կատարելագործումը:

Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնական միջոցներից է հարկային վարչարարության իրականացումը: ՀՀ հարկային վարչարարությունն ունի 20 տարվա պատմություն: Անկախության հռչակումից հետո, ՀՀ իրավահամակարգի ամրապնդման

¹ Коровкин В.В. Налогоплательщик и налоговые органы. - М.: Приор, 2005. с. 16.

² Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքը:

³ ՀՀ օրենք «Հարկային ծառայության մասին»:


ու տնտեսության զարգացմանը զուգահեռ, զարգացում է ապրել նաև ՀՀ հարկային վարչարարությունը:

Համաձայն «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի հարկային վարչարարությունը հարկային մարմնի՝ օրենքի և իրավական այլ ակտերի հիման վրա իրականացվող գործողություններ են՝ ուղղված հարկային օրենսդրության համատարած և ճիշտ կիրառման ապահովմանը, հարկային մարմնի խնդիրների իրագործմանը:

ՀՀ անկախության հռչակումից ի վեր հարկային քաղաքականության և հարկային վարչարարության զարգացումը պատմականորեն կարելի է բաժանել հետևյալ շրջափուլերի՝ մինչև 1992-1997թթ., 1997-2000թթ., 2000-2007թթ., 2007-ից հետո:

Նշված բոլոր ժամանակահատվածներում հարկային մարմինների գործունեության արդյունավետության գնահատումը կրել է դրվագային բնույթ՝ այսինքն գնահատման հիմքում ներդրված չեն համապատասխան մաթեմատիկական ձևաչափեր:

Վերջին տարիներին հարկային վարչարարության համակարգը ենթարկվել է շատ լուրջ փոփոխությունների: Դրանց ազդեցության մասին պատկերացում կազմելու համար կարելի է ուսումնասիրել նախորդ տարիների հարկային հոսքերը պետական բյուջե:



Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեի հարկերն ու տուրքերը 2007-2016 թթ. (ընթացիկ գներով, մլն դրամ)¹

Գծապատկեր 1-ից կարելի է նկատել, որ ՀՀ պետական բյուջեի հերկերի և տուրքերի հոսքը 2007 թվականից ի վեր տարեցտարի աճել է՝ 2016 թ.-ին կազմելով 1079689.1 մլն դրամ: Այս հանգամանքը ցույց է տալիս հարկային վարչարարության բնագավառում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը: Կարևոր դեր է խաղացել հսկիչ դրամական համակարգերի ներդրումը, որն իրականացվել է սովետային տնտեսության ծավալները կրճատելու և հարկային հոսքերով պետական բյուջեն համարելու նպատակով: 2009թ. հունվարի 1-ից սկսած՝ ՀՀ քաղաքացիները դրամական կտրոնների օգնությամբ կարող են մասնակցել վիճակահանության: Դրա ներդրմամբ հարկային մարմինները նպատակ են հետապնդել ավելացնելու հարկահավաքը առևտրային կետերից:


Մակայն հարկ է նշել, որ հարկահավաքման գործընթացում առավել նախընտրելի է այնպիսի մոտեցումների կիրառումը, որոնցում առաջին պլան են մղվում հարկատուների կողմից հարկային պարտավորությունների կատարման կարևորության գիտակցումն ու դրանց կամովին կատարումը: Հակառակ դեպքում հարկային մարմինները ստիպված են ուժեղացնել հարկային վերահսկողությունը, անհրաժեշտության դեպքում դիմելով դատական մարմիններին՝ կիրառելու հարկադրանքի միջոցներ:

Հարկերի և տուրքերի՝ պետական բյուջեով նախատեսված մուտքերի կատարողականի ցուցանիշը թույլ է տալիս գնահատել հարկային մարմինների հիմնական գործառնության կատար-

¹ Տվյալները՝ <http://www.armstat.am>:

ման ունակությունը, սակայն չի արտացոլում հարկային մարմնի աշխատանքը, տնտեսական դժվարությունները, հարկատուների բավարարվածության մակարդակը և այլն:

Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը թույլ է տալիս առավել օբյեկտիվ գնահատել հարկային համակարգի արդյունավետությունը:



Գծապատկեր 2. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2007-2016 թթ.¹

Ցուցանիշը ցույց է տալիս, թե ՀՆԱ-ի որ մասնաբաժինն է վերաբաշխվում պետության կողմից: Գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ ցուցանիշն առավել մեծ արժեք է ունեցել 2014 թվականին և կազմել է 23.5%: 2015 և 2016 թվականներին կազմել է համապատասխանաբար 21.2% և 20.6%:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2012-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը՝ կարևորելով հատկապես նշյալ ծրագրի՝ պետական եկամուտների քաղաքականությանն առնչվող մասով ամրագրված նպատակադրումները, առաջիկա տասնամյակի ընթացքում ռեսուրսային շրջանակի ընդլայնման հիմնական աղբյուր պետք է հանդիսանան հարկային եկամուտները, իսկ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը մինչև 2025 թվականի ավարտը պետք է կազմի շուրջ 27-28 տոկոս²:

Հարկային վարչարարության արդյունավետությունը կարելի է նաև գնահատել հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումներով և ուսումնասիրություններով, դատական կարգով կասեցված հարկային մարմնի որոշումների և հարկային մարմնի աշխատանքը դրական գնահատած հարկատուների մասնաբաժիններով:

Դիտարկելով վերջին տարիների ընթացքում հարկային մարմինների կողմից իրականացված հսկողական միջոցառումների և դրանց արդյունքում հայտնաբերված խախտումների դինամիկան, կարելի է նկատել, որ չնայած ստուգումների ընդհանուր թվաքանակի որոշ չափով նվազեցմանը, նախորդ տարիների համեմատությամբ զգալիորեն ավելացել է արձանագրված լրացուցիչ հարկային պարտավորությունների գումարային մեծությունը:

¹ Տվյալները՝ <http://minfin.am>:

² Հարկային և մարսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույց, ՀՀ կառավարության 2013 թ. հուլիսի 25-ի նիստի N 29 արձանագրային որոշման:

**2014-2015 թթ. իրականացված ստուգումների քանակը
և դրանց արդյունքում հայտնաբերված գումարները¹**

Հ/Հ	Ցուցանիշներ	2014		2015	
		Ստուգումների քանակ (հատ)	Ստուգման արդյունքում հայտնաբերված գումար	Ստուգումների քանակ (հատ)	Ստուգման արդյունքում հայտնաբերված գումար
1	Բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում՝ այդ թվում կրկնակի ստուգում (ԲՍ ՎՍ ԿՍ)	1555	19038,8	1629	28159,0
2	Բյուջեի հարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության լուծարային ստուգում (ԼՍ)	178	52,2	177	410,0
3	Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում (ՉՍ)	2909	474,8	3225	790,3
4	ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգում (ՀԴՄ)	5653	882,6	10883	1768,4
5	Օրենքով սահմանված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության ստուգում (ԵՍ)	987	240,3	927	332,0
6	Հսկիչ նշանների (դրամապիտակների) կիրառման ճշտության ստուգում (ԴՍ)	2	0,0	549	0,0
7	Ընդամենը	11284	20688,7	17390	31459,7


Խոսելով հարկային մարմնի կողմից հիմնական բիզնես-գործընթացների կազմակերպման մասին՝ հարկ է նշել, որ վերջին տարիներին ՀՀ տնտեսության բնագավառում տեղի ունեցող փոփոխությունները վերափոխեցին նաև այն միջավայրը, որտեղ գործում էր հարկային մարմինը: Այս տեսանկյունից հարկ վճարողները առավել ճկուն վարքագիծ են դրսևորում՝ մուտք ունենալով տարաբնույթ բարդ տեխնոլոգիաների և ծառայությունների տիրույթ, ինչը հնարավորություն էր ընձեռում վերջիններիս ներգրավված լինել բարդ գործարքներում: Հաշվի առնելով հարկային մարմնի՝ կատարելագործված տեղեկատվական համակարգ ստեղծելու մտադրությունը, հարկային մարմինը տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի բարեփոխումները սահմանել է որպես առաջնային կարևորության քայլ՝ այն ամրագրելով ինչպես հարկային վարչարարության բարեփոխումների ծրագրում, այնպես էլ հարկային մարմնի կողմից իրականացվելիք գերակա խնդիրներում:

Հարկային մարմինը, հարկային ծառայողների մասնագիտական պատրաստվածության բարձրացման նպատակով, սահմանել է վերապատրաստման և ուսուցման ճկուն համակարգ: Արդյունքում հարկային ծառայողների տարբեր խմբերի համար կազմակերպվում են տասնյակ թեմաներով վերապատրաստման և ուսուցման միջոցառումներ:

Հարկային ծառայողների կողմից խախտումների բացահայտման նպատակով իրականացվում են աշխատանքներ հարկային ծառայողների ծառայողական պարտականությունների, վարքագծի (էթիկայի) կանոնների կատարելագործման ուղղությամբ:

¹ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, տարեկան հաշվետվություն, հարկային և մաքսային մարմինների գործունեության, 2015թ.:

Հարկային վարչարարության ռազմավարության մեջ նշվում է, որ նպատակներից առաջինը խոշոր գործարարների կողմից հարկային պարտավորությունների կատարման իրականացումն է:



Գծապատկեր 3. 2016թ.-ի ընթացքում 100 խոշոր հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարում հարկային մարմինների կողմից հավաքագրված հարկերը¹

Գծապատկեր 3-ից կարելի է նկատել, որ 2016 թվականի ընթացքում 100 խոշոր հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջե մուտք եղած հարկերը մեծամասամբ հավաքագրվել են հարկային մարմինների կողմից:

Գործարարի կամ կազմակերպության իրական սեփականատիրոջ կարգավիճակից ու զբաղեցրած դիրքից անկախ՝ հարկային ծառայությունն իր աշխատանքներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի խոշոր գործարարների համախմբված կապիտալի ու եկամուտների շարժի վերլուծությանը, նրանց հարկային պարտավորությունների ճշգրտմանն ուղղված հսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Պետության և հասարակության համար առավել կարևոր է ոչ միայն այն, թե որքան հարկեր կհավաքվեն, այլ այն, թե ինչպես դրանք կհավաքվեն: Այլ կերպ ասած՝ կարևոր է, թե հարկային համակարգն ընդհանրապես և հարկային վարչարարությունը, մասնավորապես, հիմնված կլինեն պարտադրանքի, հարկային ճնշումների և պատժիչ միջոցների կիրառման վրա, թե հարկային պարտավորությունների կամովին հայտարարագրման և վճարման (ինքնագնահատման սկզբունքի կիրառմամբ), հարկային մարմինների կողմից հիմնականում կանխարգելիչ միջոցների ձեռնարկման, այսինքն՝ իրապես գործընկերային հարաբերությունների հաստատման վրա:

ՀՀ հարկային վարչարարության տեխնոլոգիական առաջընթացը երաշխավորելու համար հարկավոր է հարկային ծառայության աշխատակիցների որակավորման անընդհատ բարձրացում:

Բայցևայնպես, յուրաքանչյուր նորարարական ալիք՝ ուղղված առաջին հերթին տեխնոլոգիաների, մեթոդների և սարքավորումների փոփոխմանը, ստիպում է փոխվել նաև աշխատողներին: Առաջ է բերում որակավորման նոր պահանջներ:

Վորոնջյանները թույլ են տալիս կատարելու որոշակի առաջարկություններ, որոնց էությունը հետևյալներն են.

- հաճախ կազմակերպել հարկային ծառայողների տեխնիկական ուսուցման դասընթացներ,
- հարկային ծառայողների շրջանում վերաորակավորման պայմաններից առաջնահերթ սահմանել բանակցությունների վարման և շփվողության մակարդակի բարձրացման դասընթացները,
- նախատեսել աշխատանքի վարձատրության ճկուն համակարգ՝ աշխատավարձի բարձրացում՝ ելնելով տնտեսական փոփոխություններից, խրախուսում, որը կնվազեցնի կոռուպցիոն ռիսկը և կբարձրացնի աշխատանքի արտադրողականությունը:

¹ Տվյալները վերցված են՝ <http://www.taxservice.am/>

Առաջնային խնդիր է նաև մարդկային ռեսուրսների կատարելագործումը և արդյունավետ կառավարումը:

Կրթության և որակավորման մակարդակների հետագա բարձրացումը, կրթական ծախսումների աճը, այդ ծախսումների անհատական բնույթը գիտնականներին ստիպեցին ուսումնասիրել նաև խնդրի մյուս կողմերը: Ավելի ուշ կատարված հետազոտությունները դիտարկում են կրթական ներդրումների հատույցի ստացումը անմիջականորեն աշխատողի կողմից: Կրթության ծախսումները ներառում են ուղղակի ծախսումները, ինչպես նաև «չստացված» աշխատավարձը: Ամերիկյան գիտնականների հետազոտությունները ցույց են տալիս, որ բարձրագույն կրթություն ստացած անհատը հաճախ փոխհատուցում է իր կրթական ծախսումներն աշխատանքային առաջին իսկ տարվա ընթացքում: Հետագա աշխատավարձն իրենից ներկայացնում է զուտ եկամուտը¹:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի անընդհատ զարգացման պայմաններում հարկային վարչարարության շրջանակներում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման առանցքային հարցերից են նաև նոր պայմաններին ընտելանալու աշխատողների ունակությունները՝ հարմարվողությունը և շարժունակությունը (մոբիլություն): Վերջիններն ընդգրկում են ինչպես վերաորակավորման, այնպես էլ մարդկային կապիտալի տեղաշարժի հարցերը:

Ժամանակակից պայմաններում, երբ գիտելիքն ու տեղեկատվությունը արագ հնանում են, կրթությունը դառնում է անընդհատ գործընթաց, իսկ վերաորակավորման ծախսերի տեսակարար կշիռը՝ զգալի:

¹ Фишер С., Дорнбуш Р., Шмалензи Р., Экономика, М.: Дело, 2002, с. 306.

ՀԱՐԿԱՅԻՆ ՍԱՐԽՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՏԱԹԵՎԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՇԱԴԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ՏԱԹԵՎԻԿ ԱՐԱԵՅԻ ՌԱՖԱԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվել էն հարկային մարմնի՝ օրենքի և իրավական այլ ակտերի հիման վրա իրականացվող գործողությունները՝ ուղղված հարկային օրենսդրության համատարած և ճիշտ կիրառման ապահովմանը, հարկային մարմնի խնդիրների իրագործմանն ու հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը:

Հարկային վարչարարության առաջընթացը պահանջում է բարձրորակ մասնագետների առկայություն: Ուստի՝ առաջնային է դառնում կրթության ներդրումների արդյունավետության խնդիրը: Կարևորվում են նաև ՀՀ հարկային համակարգի ղեկավարների և ծառայողների ինտելեկտուալ մակարդակի բարձրացմանը միտված միջոցառումները:

Բանալի բառեր. *Տնտեսություն, հարկային համակարգ, հարկային վարչարարություն, հարկային մարմիններ, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշ, հարկային հոսքեր, հարկային ստուգումներ, հարկային համակարգի արդյունավետություն:*

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ НАЛОГОВЫХ ОРГАНОВ В ЭКОНОМИКЕ

TATEVIK VAZGENOVNA SHAGINYAN

младший научный сотрудник Института экономики имени М. Котаняна НАН РА

TATEVIK ARAEVNA RAFAELYAN

экономист Института экономики имени М. Котаняна НАН РА

Аннотация

В статье рассматриваются действия налоговых органов, осуществляемые на основе закона и иных правовых актов, направленных на обеспечение повсеместного и правильного применения налогового законодательства, решение проблем налогового органа и повышение эффективности налогового администрирования. Совершенствование налогового администрирования требует наличия высококвалифицированных специалистов. В этой связи актуальной становится проблема эффективности инвестиций в образование. Важны также мероприятия, направленные на повышение интеллектуального уровня руководителей и служащих налоговой системы РА.

Ключевые слова: *экономика, налоговая система, налоговое администрирование, налоговые органы, показатель соотношения налогов/ВВП, налоговые потоки, налоговые проверки, эффективность налоговой системы.*

THE ROLE AND MEANING OF TAX AUTHORITIES IN THE ECONOMY

TATEVIK VAZGEN SHAHINYAN

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

TATEVIK ARA RAFAELYAN

*First Level Economist, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article discusses the actions of the tax authorities that are in compliance with laws and regulations are aimed at ensuring comprehensive and unbiased enforcement of the tax legislation, addressing the issues of tax authorities, and increasing the efficacy of tax administration. Increasing the efficacy of the tax administration requires the availability of highly skilled professionals. Therefore, the issues of investments in educations are gaining more importance. The measures aimed at increasing the capacities and capabilities of executives and tax servants in the Republic of Armenia are crucial as well.

Keywords: *Economy, tax system, tax administration, tax authorities, tax-to-GDP ratio, tax flows, tax inspections, efficacy of the tax system*